ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մարտի 2014 թվականի N Մ-181-Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-045-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մարտի 5-ի N 3/3.8-2/3304-14 եզրակացությունը և հաշվի առնելով «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի 2014 թվականի մարտի 10-ի N Կ-10/03 գրությունը, ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի - 10» ծրագրի մասին» N Մ-045-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «12.5 մլն դրամ» բառերը փոխարինել «24.5 մլն դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Գյուրու քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ